ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-19/4» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԳՀ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 05-ը ապրիլի 2019թ.
ժամը 11^{00}

Մասնակցում էին՝
Գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության ինժեներական, հետախուզական և քիմիական միջոցներով ապահովման բաժնի պետ, գնդապետ Ա. Հովսեփյան (ԳԱՊ),
ՀՀ ԶՈՒ ԳՇ ռազմատեղագրական բաժնի երկրատեղեկատվական և պլանավորման բաժանմունքի պետ, փոխգնդապետ Ս. Պետրոսյան,
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության ինժեներական, հետախուզական և քիմիական միջոցներով ապահովման բաժնի առաջատար մասնագետ, Ա. Միքայելյան,
ՀՀ ԶՈՒ ԳՇ ռազմատեղագրական բաժնի տեղագրաերկրաբաշխական, նավարկային և պլանավորման բաժանմունքի սպա, մայոր Գ. Հովսեփյան:
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀՇ 2-րդ դասի խորհրդական Գ. Տերյան:

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-19/4» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Գ.Տերյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.
2.«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-19/4» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4 Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-19/4» ծածկագրով ԳՀ ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Գ.Տերյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար « գեոդեզիական գործիքներ » ձեռքբերման նպատակով կազմակերպված « ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-19/4» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակցի անվանում
1	«Էլ-Սա» ՍՊԸ /կոնսորցիում «Թեստինգ Սոյուշնզ» ՍՊԸ հետ/
2	«Գեոշին Գրուպ» ՍՊԸ
3	«ԻՆՏԵՐԳԵՈՏԷԿ» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2 .« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-19/4» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

(Գ.Տերյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը **www.armeps.am** կայքի կողմից համարվել է հետագա գնահատման համար ընդունելի:
2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:
2.3 Մասնակիցների հայտով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են « ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-19/4» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), բացառությամբ «Էլ-Սա» ՍՊԸ որտեղ ներկայացրած հայտի հավելված 1-ում նշված է, որ մասնակիցը հայտ է ներկայացրել 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների համար, այնինչ հայտը ներկայացվել է միայն 1-ին և 2-րդ չափաբաժինների համար և հավելված 2.1-ում չի նշվել իրական շահառուի հայրանունը և անձնագրի համարը, ներկայացված կոնսորցիումի պայմանագիրը և ներկայացված լիազորագիրը՝ որտեղ նշված են ընթացակարգի ծածկագրերը կնքվել են 20.03.2019թ., այնինչ վերոնշյալ ծածկագրով

ընթացակարգը հայտարարվել է ավելի ուշ, հետևաբար վերոնշյալ փաստաթղթերը կնքելիս ծածկագիրը դեռ հայտնի չի եղել, կոնսորցիումի պայնագրում մասնակից 2-ը պարտավորվում է ապահովել «մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը, իսկ ներկայացվող նմանատիպ պայմանագիրը չի համապատասխանում հրավերով սահմանված նմանատիպ պայմանագրին, կոնսորցիումի պայմանագրում նշված է կապի և համակարգչային միջոցների ձեռքբերման նպատակով՝ փակ նպատակային մրցույթով, այնինչ հրավերով ընթացակարգը կազմակերպվել է այլ ապրանքների ձեռքբերման համար և այլ ընթացակարգով, կոնսորցիումի պայնագրում նշված է, որ ցանկացած պահի կողմերը իրավունք ունեն հրաժարվել կոնսորցիումի մասնակցությունից, այնինչ ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծում նշված է, որ կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները: «Գեոշին Գրուպ» ՍՊԸ կողմից ներկայացված լիազորագրում բացակայում է տրամադրման ամսաթիվը, հետևաբար գնահատող հանձնաժողովը չի կարողանում գնահատել լիազորագրի վավերականությունը:

ՈՒստի գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ մեկ աշխատանքային օրով կասեցրել է հայտերի գնահատման նիստը և 12.04.2019թ. ծանուցել մասնակիցներին սահմանված կարգով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում մասնակիցները շտկել են անհամապատասխանությունները և նիստը շարունակվել է:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

(Գ.Տերյան)

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ են ներկայացրել 3 մասնակից.

ՀՀ	Ապրանքի անվանումը	Չ/Մ	Քան ակը	Նախահաշ վ. գումարը	1-ին տեղ զբաղեցնող կազմակերպության			Մրցույթին մասնակցող այլ կազմակերպությունների		
					անվանումը	գինը		անվանումը	գինը	
						առանց ԱԱՀ	ԱԱՀ-ով		առանց ԱԱՀ	ԱԱՀ-ով
1	Գեոդեզիական գործիքներ /Տախեոմետր էլեկտրոնային, անդրադարձիչով/	հատ	8	48,000,000	«Էլ-Սա» ՍՊԸ	35,200,000	42,240,000	«Գեոշին Գրուպ» ՍՊԸ	39,466,667	47,360,000
2	Գեոդեզիական գործիքներ /Տեղանքի տարբեր մասշտաբի եռաչափ նկարահանող սարք՝ ինքնուրույն տեղակապակցման հնարավորությամբ/	հատ	1	18,000,000	«Էլ-Սա» ՍՊԸ	11,250,000	13,500,000	«Գեոշին Գրուպ» ՍՊԸ	14,841,667	17,810,000
3	Գեոդեզիական գործիքներ /Երկհաճախականի գեոդեզիական արբանյակային դիրքորոշման կայան՝ հսկման սարքով/	հատ	1	15,000,000	«ԻՆՏԵՐԳԵՈՏԷԿ» ՍՊԸ	12,325,000	14,790,000	«Գեոշին Գրուպ» ՍՊԸ	12,441,667	14,930,000

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/:

3.3 Մասնակիցների հետ բանակցություններ չեն վարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա « ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-19/4» ծածկագրով ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Գ.Տերյան)

4.1 16.04.2019թ. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-19/4» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգում ըստ չափաբաժինների 1-ին տեղ զբաղեցնող են

ճանաչվել՝ 1-ին և 2-րդ չափաբաժիններով «Էլ-Սա» ՍՊԸ /կոնսորցիում «Թեստինգ Սոլյուշնզ» ՍՊԸ հետ/, 3-րդ չափաբաժնով՝ «ԻՆՏԵՐԳԵՈՏԷԿ» ՍՊԸ -ն:

4.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել հատուկ նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-19/4» ծածկագրով ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

4.3 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ, ինչպես նաև ընթացակարգի հրավերի ***«Ֆինանսական միջոցներ»*** որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Գ.Տերյան)

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Գ.Տերյան)

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-19/4» ծածկագրով ընթացակարգի նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից հրավերով նախատեսված որակավորման փաստաթղթերին համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը հանձնաժողովի կողմից ամփոփման վերջնաժամկետի օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող	Ա. Հովսեփյան
Գնահատող	Ս. Պետրոսյան
Գնահատող	Ա. Միքայելյան
Գնահատող	Գ. Հովսեփյան
Գնումները համակարգող՝	Գ. Տերյան